ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19-20-25
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

4 հունիսի 2020թ. քք. Երևան

Նախագահությամբ՝ Ռ. Սինոյանի
անդամներ՝ Հ. Ռշտունի
Ա.Ալաբերքյան
Բ. Ղալոյան
Վ. Բերակչյան
Տ. Իսրաելյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղի մասին (Պահեստային նստարանին «Փյունիկ» թիմի ներկայացված անձանցից ոչ բոլորը, կամ ոչ լիովին պահպանում էին դիմակ կրելու պահանջը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

2. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղի մասին (Պահեստային նստարանին «Արարատ-Արմենիա» թիմի ներկայացված անձանցից ոչ բոլորը, կամ ոչ լիովին պահպանում էին դիմակ կրելու պահանջը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

3. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղի մասին (Կարգադրիչները չէին ստուգում մարզադաշտ մտնող անձանց բեյջերը, տրիբունայում նստած մարդկանց բեյջերի առկայությունը: Արդյունքում տրիբունայում հայտնվել էին առանց բեյջ, ակումբների հետ անմիջական կապ չունեցող մարդիկ, թեստավորում չանցած մարդիկ: Տանտեր ակումբի կողմից չէին տպագրվել համապատասխան քանակի բեյջեր, ինչի արդյունքում մարզադաշտ մուտք էին գործել տարբեր մարդիկ՝ առանց բեյջերի: Դարպասի հետևում գտնվող լուսանկարիչները նստած էին միմյանց մոտ՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու: Միայն պատվիրակի միջամտությունից հետո հնարավոր եղավ ապահովել նրանց միջև հեռավորությունը: VIP օթյակում և «Ալաշկերտ» թիմի համար նախատեսված հատվածում որոշ մարդիկ չէին կրում դիմակներ, խաղին չհայտավորված ֆուտբոլիստները տրիբունայում նստած էին՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու: «Ալաշկերտ» թիմի պահեստայինների նստարանին ֆուտբոլիստները նստած էին շատ մոտ, միայն միջամտությունից հետո հնարավոր եղավ մի փոքր սահմանազատել նրանց միջև եղած տարբերությունը՝ որոշ ֆուտբոլիստների տեղափոխելով կողքի աթոռներին) /զեկուցող Հ. Ռշտունի/

4. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղի մասին (Պահեստայինների նստարանին «Նոա» թիմի ֆուտբոլիստները նստած էին շատ մոտ՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու) /զեկուցող Հ. Ռշտունի/

5. 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղի մասին (Շտապ օգնության մեքենայի ուշացման պատճառով հանդիպման երկրորդ խաղակեսը սկսվել է 8 րոպե ուշացումով:) /զեկուցող Հ. Ռշտունի/

6. 31/05/20թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ093) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Վահագն Հայրապետյանի (N 11025) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային

հնարավորությունից զրկելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

7. 30/05/20թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ092) խաղի մասին (Պատվիրակի ցուցումով խաղը մեկնարկել է 9 րոպե ուշացումով: Ուշացման պատճառները երկուսն էին.

1. Չնայած այն հանգամանքին, որ «Լոռի ՖԱ»-ն պարտավոր էր թիմի 9 պաշտոնյաների (կամ հյուրերի) կորոնավիրուսի թեստավորման պատասխանը ներկայացնել պատվիրակին խաղի մեկնարկից 2 ժամ առաջ, սակայն, ելնելով ստեղծված իրավիճակից, պատվիրակը թույլատրեց այն ներկայացնել խաղի մեկնարկից 1 ժամ առաջ: Արդյունքում, «Լոռի ՖԱ»-ն վերոնշյալ փաստաթուղթը պատշաճ կերպով ներկայացրեց միայն խաղի մեկնարկի սահմանված ժամից 5 րոպե հետո:

2. Խաղի մեկնարկից 5 րոպե առաջ պատվիրակը նկատեց, որ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայի տարածք են ներխուժել մի քանի երկրպագուներ, ովքեր ցանկանում էին ուղղակի ֆուտբոլի դիտել: Մինչ պատվիրակը վերոնշյալ անձանց մարզադաշտից անձամբ հեռացնում էր տարածքից, ի հայտ եկավ, որ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայի արհեստական խոտածածկով խաղադաշտի հարակից տրիբունայում հավաքվել են մոտ 20-30 երկրպագուներ: Անմիջապես մրցավարներին ցուցում տրվեց խաղը չսկսել: «Լոռի ՖԱ»-ն արագ արձագանքեց ստեղծված իրավիճակին և պատշաճ կերպով հեռացրեց բոլոր երկրպագուներին ինչպես մարզադաշտի տարածքից, այնպես էլ տրիբունայից, և պատվիրակի հորդորներից հետո միայն ոստիկանության աշխատակիցները հսկողություն սահմանեցին տրիբունայի տարածքում: Հանդիպումը մեկնարկեց մարզադաշտի տարածքից թույլտվություն չունեցող անձանց հեռացնելուց հետո:) /զեկուցող Հ. Ռշտունի/

8. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղի մասին («Դիլիջան ՖԱ» թիմը չի պահպանել նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, ինչի արդյունքում պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները կրում էին տարբեր գույնի ժիլետներ: Խաղի մեկնարկից որոշ ժամանակ անց պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները չէին պահպանում սոցիալական հեռավորությունը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

9. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղի մասին («Սևան» թիմը չի պահպանել նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, ինչի արդյունքում պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները կրում էին տարբեր գույնի ժիլետներ: Խաղի մեկնարկից որոշ ժամանակ անց պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները չէին պահպանում սոցիալական հեռավորությունը:) /զեկուցող Հ. Ռշտունի/

10. 31/05/20թ. «Վան»-«ԲԿՄԱ» (ԱԽ198) խաղի մասին (Հանդիպման ընդմիջմանը մարզադաշտի տարածքում չկար որևէ ոստիկան, ինչի հետևանքով երկրորդ խաղակեսի մեկնարկն ուշացավ մոտ 9 րոպեով: Բացի այդ, երկրորդ խաղակեսում տրիբունայի մի հատվածում, ինչպես նաև թունելի մոտակայքում հայտնվեցին առանց բեյջ անձինք: Մարզադաշտի հարակից տարածքում կային երկրպագուներ: Ոստիկանության աշխատակիցը, պատվիրակի ցուցումով, կարգադրեց նրանց պահպանել սոցիալական հեռավորություն: Որոշները պահպանեցին, իսկ որոշները՝ ոչ:) /զեկուցող Հ. Ռշտունի/

11. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 23/05/20թ. «Շիրակ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ089) խաղի մասին («Լոռի ՖԱ» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝ չապահովելով Բարձրագույն խմբի համար նախատեսված 7 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը) /զեկուցող Հ. Ռշտունի/

12. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղի մասին («Արագած» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝

չապահովելով Առաջին խմբի համար նախատեսված 10 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը) /զեկուցող Հ. Ռշտունի/

13. 31/05/20թ. «Արարատ-ՖՁ»-«Եղվարդ» (ՖՁ003) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանի (N 9157) հեռացման մասին (մրցավարին հրելու համար) /զեկուցող Հ. Ռշտունի/

14. 31/05/20թ. «Արարատ-ՖՁ»-«Եղվարդ» (ՖՁ003) խաղի մասին («Եղվարդ» թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը ներկայացել է 20 րոպե ուշացումով) /զեկուցող Հ. Ռշտունի/

1. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղի մասին (Պահեստային նստարանին «Փյունիկ» թիմի ներկայացված անձանցից ոչ բոլորը, կամ ոչ լիովին պահպանում էին դիմակ կրելու պահանջը:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
1. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղին (Պահեստային նստարանին «Փյունիկ» թիմի ներկայացված անձանց՝ դիմակ չկրելու կամ ոչ լրիվ կրելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Փյունիկ» ՖԱ ՀԿ-ին հայտարարել նկատողություն:

2. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղի մասին (Պահեստային նստարանին «Արարատ-Արմենիա» թիմի ներկայացված անձանցից ոչ բոլորը, կամ ոչ լիովին պահպանում էին դիմակ կրելու պահանջը:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
2. 23/05/20թ. «Փյունիկ»-«Արարատ-Արմենիա» (ԲԽ088) խաղին (Պահեստային նստարանին «Արարատ-Արմենիա» թիմի ներկայացված անձանց՝ դիմակ չկրելու կամ ոչ լրիվ կրելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արարատ-Արմենիա» ՖԱ-ին հայտարարել նկատողություն:

3. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղի մասին (Կարգադրիչները չէին ստուգում մարզադաշտ մտնող անձանց բեյջերը, տրիբունայում նստած մարդկանց բեյջերի առկայությունը: Արդյունքում տրիբունայում հայտնվել էին առանց բեյջ, ակումբների հետ անմիջական կապ չունեցող մարդիկ, թեստավորում չանցած մարդիկ: Տանտեր ակումբի կողմից չէին տպագրվել համապատասխան քանակի բեյջեր, ինչի արդյունքում մարզադաշտ մուտք էին գործել տարբեր մարդիկ՝ առանց բեյջերի: Դարպասի հետևում գտնվող լուսանկարիչները նստած էին միմյանց մոտ՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու: Միայն պատվիրակի միջամտությունից հետո հնարավոր եղավ ապահովել նրանց միջև հեռավորությունը: VIP օթյակում և «Ալաշկերտ» թիմի համար նախատեսված հատվածում որոշ մարդիկ չէին կրում դիմակներ, խաղին չհայտավորված ֆուտբոլիստները տրիբունայում նստած էին՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու: «Ալաշկերտ» թիմի պահեստայինների նստարանին ֆուտբոլիստները նստած էին շատ մոտ, միայն միջամտությունից հետո հնարավոր եղավ մի փոքր սահմանազատել նրանց միջև եղած տարբերությունը՝ որոշ ֆուտբոլիստների տեղափոխելով կողքի աթոռներին)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
3. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղին (Կարգադրիչների թերի աշխատանքի, համապատասխան քանակի բեյջերի բացակայության, ֆուտբոլիստների միջև սոցիալական հեռավորությունը չպահպանելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝«Ալաշկերտ» ՖԱ-ին հայտարարել նկատողություն:

4. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղի մասին (Պահեստայինների նստարանին «Նոա» թիմի ֆուտբոլիստները նստած էին շատ մոտ՝ առանց սոցիալական հեռավորություն պահպանելու)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
4. 24/05/20թ. «Ալաշկերտ»-«Նոա» (ԲԽ087) խաղին (Պահեստայինների նստարանին «Նոա» թիմի ֆուտբոլիստների կողմից սոցիալական հեռավորություն չպահպանելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Նոա» ՖԱ ՀԿ-ին հայտարարել նկատողություն:

5. 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղի մասին (Շտապ օգնության մեքենայի ուշացման պատճառով խաղի երկրորդ խաղակեսը սկսվել է 8 րոպե ուշացումով:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
5. 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղին (Խաղն ուշացումով սկսվելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 29-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Տորպեդո»-ին տուգանել 50.000 ՀՀ դրամ:

6. 31/05/20թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ093) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Վահագն Հայրապետյանի (N 11025) հեռացման մասին (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
6. 31/05/20թ. «Ալաշկերտ»-«Արարատ» (ԲԽ093) խաղին «Ալաշկերտ» թիմի ֆուտբոլիստ Վահագն Հայրապետյանի (N 11025) հեռացման (մրցակցին ակնհայտ գոլային հնարավորությունից զրկելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 32-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Վահագն Հայրապետյանին որակազրկել 1 խաղով, «Ալաշկերտ» ՖԱ-ին տուգանել 30.000 ՀՀ դրամ:

7. 30/05/20թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ092) խաղի մասին (Պատվիրակի ցուցումով խաղը մեկնարկել է 9 րոպե ուշացումով: Ուշացման պատճառները երկուսն էին.

1. Չնայած այն հանգամանքին, որ «Լոռի ՖԱ»-ն պարտավոր էր թիմի 9 պաշտոնյաների (կամ հյուրերի) կորոնավիրուսի թեստավորման պատասխանը ներկայացնել պատվիրակին խաղի մեկնարկից 2 ժամ առաջ, սակայն, ելնելով ստեղծված իրավիճակից, պատվիրակը թույլատրեց այն ներկայացնել խաղի մեկնարկից 1 ժամ առաջ: Արդյունքում, «Լոռի ՖԱ»-ն վերոնշյալ փաստաթուղթը պատշաճ կերպով ներկայացրեց միայն խաղի մեկնարկի սահմանված ժամից 5 րոպե հետո:

2. Խաղի մեկնարկից 5 րոպե առաջ պատվիրակը նկատեց, որ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայի տարածք էին ներխուժել մի քանի երկրպագուներ, ովքեր ցանկանում էին ուղղակի ֆուտբոլի դիտել: Մինչ պատվիրակը վերոնշյալ անձանց մարզադաշտի անձամբ հեռացնում էր տարածքից, ի հայտ եկավ, որ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիայի արհեստական խոտածածկով խաղադաշտի հարակից տրիբունայում հավաքվել են մոտ 20-30 երկրպագուներ: Անմիջապես մրցավարներին ցուցում տրվեց խաղը չսկսել: «Լոռի ՖԱ»-ն արագ արձագանքեց ստեղծված իրավիճակին և պատշաճ կերպով հեռացրեց բոլոր երկրպագուներին՝ ինչպես մարզադաշտի տարածքից, այնպես էլ տրիբունայից, և պատվիրակի հորդորներից հետո միայն ոստիկանության աշխատակիցները հսկողություն սահմանեցին տրիբունայի տարածքում: Հանդիպումը մեկնարկեց մարզադաշտի տարածքից թույլտվություն չունեցող անձանց հեռացնելուց հետո:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
7. 30/05/20թ. «Լոռի ՖԱ»-«Նոա» (ԲԽ092) խաղին (Անհրաժեշտ փաստաթուղթը չներկայացնելու, մարզադաշտի տարածք երկրպագուներ մուտքը չկանխելու) համար, ՀՖՖ

կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Վանաձորի Ֆուտբոլի Ակադեմիա»ՀԿ-ին հայտարարել նկատողություն:

8. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղի մասին («Դիլիջան ՖԱ» թիմը չի պահպանել նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, ինչի արդյունքում պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները կրում էին տարբեր գույնի ժիլետներ: Խաղի մեկնարկից որոշ ժամանակ անց պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները չէին պահպանում սոցիալական հեռավորությունը:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
8. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղին (նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստների միջև սոցիալական հեռավորություն չպահպանելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ԴՖԱ ՓԲԸ»-ին հայտարարել նկատողություն:

9. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղի մասին («Սևան» թիմը չի պահպանել նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, ինչի արդյունքում պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները կրում էին տարբեր գույնի ժիլետներ: Խաղի մեկնարկից որոշ ժամանակ անց պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստները չէին պահպանում սոցիալական հեռավորությունը:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
9. 30/05/20թ. «Դիլիջան ՖԱ»-«Սևան» (ԱԽ190) խաղին (նախախաղային խորհրդակցության ընթացքում պայմանավորված ժիլետների գույները, պահեստայինների նստարանին գտնվող ֆուտբոլիստների միջև սոցիալական հեռավորություն չպահպանելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Սևան» ՖԱ-ին հայտարարել նկատողություն:

10. 31/05/20թ. «Վան»-«ԲԿՄԱ» (ԱԽ198) խաղի մասին (Հանդիպման ընդմիջմանը մարզադաշտի տարածքում չկար որևէ ոստիկան, ինչի հետևանքով երկրորդ խաղակեսի մեկնարկն ուշացավ մոտ 9 րոպեով: Բացի այդ, երկրորդ խաղակեսում տրիբունայի մի հատվածում, ինչպես նաև թունելի մոտակայքում հայտնվեցին առանց բեյջ անձինք: Մարզադաշտի հարակից տարածքում կային երկրպագուներ: Ոստիկանության աշխատակիցը, պատվիրակի ցուցումով, կարգադրեց նրանց պահպանել սոցիալական հեռավորություն: Որոշները պահպանեցին, իսկ որոշները՝ ոչ:)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
10. 31/05/20թ. «Վան»-«ԲԿՄԱ» (ԱԽ198) խաղին (երկրորդ խաղակեսի մեկնարկն ուշացնելու, սոցիալական հեռավորություն չպահպանելու) համար, ՀՖՖ կարգապահական և Էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «ՖԱ Վան ՀԿ»-ին հայտարարել նկատողություն:

11. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 23/05/20թ. «Շիրակ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ089) խաղի մասին (Լոռի ՖԱ թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝ չապահովելով Բարձրագույն խմբի համար նախատեսված 7 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
11. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 23/05/20թ. «Շիրակ»-«Լոռի ՖԱ» (ԲԽ089) խաղի մասին (Լոռի ՖԱ թիմը ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը

չկատարելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Վանաձորի Ֆուտբոլի Ակադեմիա»ՀԿ-ին տուգանել 20.000 ՀՀ դրամ:

12. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղի մասին («Արագած» թիմը խախտել է ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետը՝ չապահովելով Առաջին խմբի համար նախատեսված 10 ՀՀ քաղաքացիություն ունեցող ֆուտբոլիստների քանակը)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
12. ՀՖՖ ՄԿԱ բաժնի պետ Խ. Զարգարյանի 01/06/2020թ. ծառայողական գրության քննարկում, 31/05/20թ. «Տորպեդո»-«Արագած» (ԱԽ197) խաղին («Արագած» թիմը ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կանոնակարգի 25-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջը չկատարելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 31-րդ հոդվածի 51-րդ կետի համաձայն՝ «Արագած» ՖԱ-ին տուգանել 20.000 ՀՀ դրամ:

13. 31/05/20թ. «Արարատ-ՖԶ»-«Եղվարդ» (ՖԶ003) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանի (N 9157) հեռացման մասին (մրցավարին հրելու համար)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
13. 31/05/20թ. «Արարատ-ՖԶ»-«Եղվարդ» (ՖԶ003) խաղին «Եղվարդ» թիմի ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանի (N 9157) հեռացման (մրցավարին հրելու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 39-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ ֆուտբոլիստ Տիգրան Գրիգորյանին որակազրկել 3 խաղով, «Եղվարդի համայնքապետարան»-ին տուգանել 50.000 ՀՀ դրամ:

14. 31/05/20թ. «Արարատ-ՖԶ»-«Եղվարդ» (ՖԶ003) խաղի մասին («Եղվարդ» թիմի ներկայացուցիչը նախախաղային խորհրդակցությանը ներկայացել է 20 րոպե ուշացումով)

ՈՐՈՇԵՑԻՆ՝
14. 31/05/20թ. «Արարատ-ՖԶ»-«Եղվարդ» (ՖԶ003) խաղի մասին («Եղվարդ» թիմի ներկայացուցչի նախախաղային խորհրդակցությանը ուշանալու) համար, ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 38-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ «Եղվարդի համայնքապետարան»-ին հայտարարել նկատողություն:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ՌՇՏՈՒՆԻ

Հիշեցում՝
ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի հոդված 12-ի համաձայն՝ Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման կարգ. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումները Ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել Բողոքարկման Կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում: